14547

891.99
Ч-27

ՀՐԱՏԱՐԱԿ. Կ.ՏՕՆԻԿԵԱՆ ԳՐԱՏԱՆ ԹԻՒ 2

Ղ. ՆԱՃԱՐԵԱՆ

ԶԱՐԹՕՆՔԻ ՀՈՎԵՐ

(Նախաբայլեր)

2003

ՊԷՅՐՈՒԹ
ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Ց. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ
1926

891.99
Ն-27

ՀՐԱՏԱՐԱԿ. Կ.ՏՕՆԻԿԵԱՆ ԳՐԱՏԱՆ ԹԻՒ 2

891.99
G-27

Ղ. ՆԱՃԱՐԵԱՆ

ԶԱՐԹՕՆՔԻ ՀՈՎԵՐ

(Նախաբայլեր)

ՊԷՅՐՈՒԹ
ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Ց. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ
1926

A13
159

34769-Կ.Հ.

18003-59

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Որբ գրոնքեամբս հասարակութեան աչքը շլացնելու յաւակնութիւնը չունիմ, եւ ոչ ալ ինքզինքս հանրութեան ծանօթացնելու մարմաջ մը, այլ միակ նպատակս է "Զարթօնքի Հովեր„ով ամփոփել դեռատի խոհերուս, ծաղիկ կեանքիս առաջին տպաւորութիւնները՝ ինձ համար անմոռանալի յիշատակ մը դարձնել:

Ղ. ՆԱՃԱՐԵԱՆ

ԶԱՐԹՆՈՒՄ

Ո՜հ, արեգակին տողերը փաղփուն
Ընդհուպ ուժգնօրեն.
Չիս արթնցուցին այս առաւօտուն,
Խոր քունիս մէջեն:

ԼՈՒՍՆԱԿԻՆ ՇՈՂԵՐՈՒՆ

Սիրտը ծարաւ է,
Արծաթ լուսնակին
Անչէջ ցոլքերուն,
Որ շողշողային՝
Տիեզերքին մէջ
Անդուլ կը փայլին։

Սիրտը ծարաւ է,
Ամէն իրիկուն.
Ան ընպել կ'ուզէ
Լուսնակին անհուն
Բիւրեղ արծաթէ
Շողերը փաղփուն։

ԱՆՇԷՋ ԿՐԱԿ

Իմ սրբ սրտիս մէջ,
Հրաբուխ մը կայ,
Որ գիշեր ցորեկ
Անդուլ կը մըխայ.

Քանի արդարութիւն
Զըլլայ մարդոց մէջ.
Այն միշտ պիտ մըխայ
Մինչև կեանքիս վերջ։

* * *

ԱՍՏՂԵՐՈՒՆ

Ո՛վ լուսաւոր աստղեր անթիւ,
Ինչո՞ւ համար կը շողշողաք.
Անհունութեան մէջ հեւ ի հեւ
Արդեօք ունի՞ք մի նպատակ։

Խորհուրդաւոր ցոլացումով
Որ կը ցոլաք հեռո՛ւն, հեռո՛ւն,
Ձերին անչէջ, մեղմ ցոլքերով.
Անջրպետին մէջն անհուն։

Ինչո՞ւ ձեզ պէս իմ հոգիս ալ.
Խորհուրդաւոր ցոլացումով
Տիեզերքին մէջ գեղափայլ,
Չի շողշողար բուսա շողերով։

* * *

ԲԼԲՈՒԼԻՆ

Երգ՛է, բըլբուլ, վանդակիդ մէջ
Գեղգեղանքով քո քաղցրիկ.
Դու. մի՛ նեղուիր ու մի՛ տըխրիր
Երգ՛է երգըդ անուշիկ։

Ինչո՞ւ այսպէս տրտո՛ւմ, տըխո՛ւր
Երգըդ բընաւ չես երգեր.
Քանզի ես ալ քեզի նման
Ցաւ ու վիշտեր եմ կրեր։

Երգէ՛, բըլբուլ, դիւթիչ ձայնով,
Կարօտի երգն իմ սըրտիս,
Երգէ՛ նաև դու անդադար
Նո՛ր, նո՛ր, յոյսեր մայր երկրիս։

ՑՈՑՍԵՐ ԵՐԳԵՑԻՐ

Նուեր առ Աջպահ,

Հնչուն թելերով,
Քնարդ լարեցիր,
Նորածագ այգով՝
Ցոյսեր երգեցիր.

Միայն, ընկեր ջան,
Թշուառին համար։

ԼՈՑՍԸ ՄԻԱՅՆ

Ճշմարտութեան, արդարութեան
Լոյսը միայն,
Երբ բողբոջի. մարդոց խաւար
Սրտերուն մէջ՝
Ու մնաց անշէջ.
Լոկ այն աչեն, պիտ հաւ՚տամ որ
Ալ ամէն օր.
Պիտի չըլլայ, կրկին անվերջ,
Աշխարհիս մէջ։

ԱՍՏՂԵՐՈՒՆ

Աստղեր, դու՛ք անվերջ
Անծիր երկնից մէջ,
Կը պըլպըլաք միշտ,
Արդեօք, ունի՞ք ինձ պէս վիշտ,
Որ ամէն իրիկուն,
Կը մընաք անքուն,
Անջրպետին մէջ։

ՆԱՑԷ ԴԷՊԻ ՎԵՐ

Քոյրիմ սիրական նայէ՛ երկինքին՝
Սա պըլպըլացող անթիւ աստղերուն,
Կարծես թէ անոնք՝ մեզ պէս վիշտ ունին
Իրենց սըրտին մէջ ամէն իրիկուն։

Ո՛հ, կարծես անոնք անհայր ու անմայր՝
Մեզ պէս մնացին տարիներ անվերջ։
Ո՛հ, կարծես անոնք դժբախտ ու թշուառ
Մեզ պէս մնացին մթնոլորտին մէջ։

Եւ ատոր համար ամէն իրիկուն,
Սա անծայրածիր տիեզերքին մէջ՝
Կը մընան աննկնջ, կը մընան անքուն՝
Այն տեղ շարունակ անջրպետին մէջ։

ԱՌՈՒԱԿԻՆ

Ոլոր մոլոր ու՞րկէ կուգաս
Ո՛վ սիրուն առուակ,
Ըսէ ինծի դուն ու՞ր կ'երթաս
Այդչափ շատ արագ։
—Ցորեկ գիշեր թափառելով
Լեռներու մէջէն.
Կ'անցնիմ կ'երթամ ես դէպի ծով
Ձեր գիւղին քովէն։
Դու շարունակ ցորեկ գիշեր
Կանցնիս ու կերթաս
Ջունի՞ս ինձ պէս ցաւ ու վիշտեր
Որ կենաս, ողբաս։
—Հէք պատանի մելամաղձոտ
Ինչո՞ւ կուլաս յար.
Պիտի ծագի նոր առաւօտ
Նաև քեզ համար։
Ո՛հ, ինչ կ'ըսես, ինչե՛ր կ'ըսես
Ո՛վ սիրուն առուակ,
Զատուած եմ ես հայրենիքէս
Գանդուխտ շարունակ։

ՀԱՅՐԵՆԻՔԱՐՕՏ

Հեռո՞ւ եմ քե՛զմէ, սիրուն հայրենիք,
Չունիմ ո՛չ մէկ տեղ, և ոչ ալ բունիկ,
Եղած եմ պանդուխտ, ու կը թափառիմ.
Գիշեր և ցորեկ հանդիստ քուն չունիմ։
Լեռներու մէջէն, գըլգըլալով միշտ,
Վտակներն կանցնին չունին ցաւ և վիշտ,
Օտար են բոլոր վտակներն սիրուն,
Որ կուգան կանցնին կերթան չատ հեռուն։
Երբեմն կը նստիմ հիւղակիս առջեւ.
Աստղերն կը ցոլան իմ գլխուս վերեւ,
Օտար են ինծի, աստղերն ու լուսին,
Որ կը շողշողան վերեւն իմ գըլխին։
Ամէն անգամ որ կը յիշեմ զքեզ,
Կը յուզուի սիրտս ցաւերով պէս պէս,
Նուաղած սիրտով ա՛խ մը կը քաշեմ...

. . . . . .

ՊԻՏ ՅՈԼԱՆ

Եթերին մէջ տե՛ս, քոյրիկջան
Մարած չեն գեռ՝ յուսոյ աստղերը համայն
Այլ կը ցոլան . . . . . .
Այլ կը ցոլան ու պիտ ցոլան
Յուսոյ լուսոյ աստղերն համայն
Եթերին մէջ մինչ յաւիտեան։

ԱՐԵԳԱԿԻՆ

Փայլէ՛, փայլէ՛, մինչ յաւիտեան
Ո՛վ ոսկեփայլ արեգ անուշջ,
Թող քու լոյսդ աշխարհիս համայն,
Լուսաւորուի դարեր անվերջ։

ՊԱՏՈՒԷՐ
ԱՌ Վ. ԳՆԴՈՒՆԻ

Զըլլայ որ մարի
Այն հուրն անշէջ,
Այլ միշտ թող վառի,
Թարմ սըրտիդ մէջ։

Զըլլայ որ դադրի,
Փետրէ գրիչդ ալ,
Այլ թող միշտ շարժի,
Ըլլաս ուր որ ալ։

Զըլլայ թէ մոռնաս
Իմ այս պատուէրս,
Այլ ուր որ երթաս
Ցիշես իմ սէրըս։

Ընկեր սիրական
Այս է պատուէրն իմ,
Իբըր քեզ պաշտպան
Եւ կամ անխախտ հիմ։

ՀԻՒԱՆԴ Է . . .

Հըրաբուխի մը նըման,
Սիրտըս բոցեր կը ժայթքէ,
Դէպ երկինքն անսահման,
Ցորեկ գիշեր այրելէ.
Սիրտըս սաստիկ հիւանդ է.

Ա՛խ, հիւանդ է, հիւանդ է.
Զ'ունիմ բըժիշկ մ'իսկ գըթած, որ
Ինձ կարեկցի ու բուժէ
Այս որբ սիրտս իմ վիրաւոր,
Որ կը տառապի ամէն օր։

ՀԱՅ ՈՐԲԻՆ

Իրիկուան երբ արեգակը կը մարի,
Ու երբ մութը թանձրօրէն կը պատէ
Սա ամայի լեռները սեգ, վիթխարի,
Ճիշդ այն ատեն աչքերդ վերցուր ու նայէ.

Անծայրածիր և անսահման երկինքին,
Ու լաւ դիտէ, որքա՜ն հեռուն, որ կրնաս
Հո՛ն պիտ տեսնես անթիւ աստղեր լուսածին
Որք կը շողան բիւր շողերով վաղահաս։

Ահաւասիկ վերջալոյսէն ետքն է որ
Կապոյտին մէջ հեղհեղէ կը ծընին,
Հրաշալի, բիւր աստղիկներ լուսաւոր
Ծանուցելու Աստուծոյ փառքն անդին։

Տիեզերքը որքա՜ն որ ալ է անհուն
Աստղերն ալ են այնքա՜ն անթիւ անհամար.
Դուն դիտցիր որ անոնց վրայ մի անքուն
Արդարութեան Արեգ մը կայ բոցավառ։

ՁՕՆ
ԲԱՆԻՈՐՆԵՐՈՒ

Եւ վերջապէս սեւ օրերը ամպամած
Խոհերու պէս պիտ թռչին.
Արշալոյսնե՛ր զուարթ օրե՛ր լուսապանծ
Հորիզոնէն վերըստին՝
Ձեզի համար պիտ ծագին։
Այս պահուս դեռ գիշեր է մութ, սոսկալի,
Ձիկայ մի աստղ լուսեղէն.
Սակայն վաղը վըստահ եմ որ պիտ փայլի
Անծայրածիր անհունէն,
Արուսեակը ոսկեղէն։
Ուրեմն՝ օն, ի՛յառաջ երթանք ընկերներ
Միշտ դէպ ի գործ ցնծագին
Քանզի վաղուանցնոր յոյսերն են արեւներ
Ճառագայթներով լուսածին
Որ մեզ համար պիտ ծագին։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ԱՌԻ ՍՍՌ
Ա. Ալ. Ա
Մ. ՄԱՍՍԻԿՅԱՆԻ
198003-79

ՑԱՆԿ

Երկու խօսք 1
Զարթնում 3
Լուսնակին շողերուն . . . 4
Անչէջ կրակ 5
Աստղերուն 6
Բլբուլին 7
Ցոյսեր երգեցիր . . . 8
Լոյսը մխայն 9
Աստղերուն 9
Նայէ դէպի վեր . . . 10
Առուակին 11
Հայրենի կարօտ . . . 12
Պիտ ցոլան, ... 13
Արեգակին 13
Պատուէր 14
Հիւանդ է 15
Հայ որբին 16
Զօն բանուորներուն . . . 17

1p
47

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ Է
ՏՓԹ. Յ. ՔԱՂԹԱՑԵԱՆԻ ԵՒ Ն. ՓԻՒՓԷԼԵԱՆԻ

ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ
1927
Ի
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԱՐԵՑՈՅՑԸ

Կեդրոնատեղի.— Տfp. Յ. Քաղքացեան
RUE DE DAMAS 79. BEYROUTH

ՄՕՏ ՕՐԷՆ ՀՐԱՊԱՐԱԿ ԿԵԼԼԷ
Կ. ԱԶԱՊԱՀԵԱՆԻ
«ՍԷՐԸ ՀԱՑԵԼԻԻՆ ՄԷՋ» ՆՈՐԱՎԷՊԸ

ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱԻ
ԱՇԸԳ ԲԷՐԷՄ ԻԼԷ ԱՍԼԸ ԽԱՆԸՄ
Անուն Հայաստան Թրքերէն լեզուով գիրքը։ Մեծամանակ ապսպրանք տուողին բացառիկ զեղչ։

Դիմել՝ Կ. ՏՕՆԻԿԵԱՆ ԳՐԱՏԱՆ
B. P. 718 Beyrouth

2013
14547